Հիշել Տիրոջն ամեն օր



Ընկերներ, ամենօրյա գործեր, տնային աշխատանքներ, հեռուստացույց՝ կան շատ բաներ, որոնք գրավում են մեր ուշադրությունը: Սակայն ամեն շաբաթ մենք խոստանում ենք Երկնային Հորը, «որ [մենք] միշտ հիշում ենք [Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին]» (ՎևՈւ 20.79):

Նախագահ Այրինգն ասում է, որ մենք կարող ենք «ամեն օր կատարել ընտրություններ», որոնք օգնում են մեզ հիշել Փրկիչին: Խորհեք այս ամիս նպատակ դնելու մասին, որպեսզի ամեն օր ավելի շատ հիշենք Փրկիչին: Դուք կարող եք օրացույց կազմել և պարտավորվել ամեն օր կատարել որևէ բան: Նախագահ Այրինգը թվարկում է քայլեր, ինչպես օրինակ՝ կարդալ սուրբ գրությունները, աղոթել հավատքով ու ծառայել Փրկիչին և ուրիշներին: Նա նշում է նաև՝ պահել օրագիր, հաճախել Եկեղեցու ժողովներին, լսել գերագույն համաժողովը, գնալ տաճար, երգել օրհներգեր և այլն: Եթե մենք ամեն օր հիշենք Փրկիչին, Նախագահ Այրինգը խոստանում է, որ «օրհնությունները . . . կտրվեն աստիճանաբար ու մշտապես . . . [և] կձևավորեն մեզ՝ դառնալու Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները»:

Շատ սեր

Երբ մենք կարդում ենք սուրբ գրությունները կամ աղոթում ենք, մենք զգում ենք, թե որքան են Երկնային Հայրն ու Հիսուսը սիրում մեզ: Գունավորեք սիրտ ամեն անգամ, երբ դուք աղոթում եք կամ կարդում սուրբ գրությունները: Ուրիշ ի՞նչ կարող եք անել Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին մոտիկ զգալու համար: